

Էր: Ուստի այս լուրերը հաղորդելու համար հորը սուրհանդակ մը դրկելն վերջ, Բագրատունին սկսաւ գանգտիլ ժամանակին դժուարութեան վրայ, մանաւանդ որ սասնեցիք բոլոր իւր եւ հորը այնչափ ինամքը՝ յարդարեալ պատրաստութիւնքը հիմնահատակ ըրեր էին: Եւ երբ իրենք կը յուսային այդ ճիւղին՝ Բուղայի սիրտը կակղացնել ամէն օր նոր-նոր եւ անհաւատալի յանդգնութեամբ ամէն խորհուրդ վեր ի վայր կը շրջէին:

— Չի լսեցի՞ր այդ սասնեցուոց նոր քաջագործութիւնը:

— Ո՛չ. նո՞ր բան կայ:

— Խումբ մը այս լեռնականներէն իրենց սարերուն գագաթներէն կ'իջնէն, կ'ուզան մինչեւ Դուին, եւ հոն համարեա Բուղայի աչաց առջեւ երեք հայ նախարար, որք Նկան բերդին եւ Աշոտ Արծրունուոյ անձնատուր լինելուն պատճառ եղան Մուշեղ Վահեունի, Վահրամ Տրունի եւ Վահրամ թիկնապահ, մահապարտաց սահման եալ կախաղանը կը հանեն եւ բոլոր Դուին՝ հայ ու տաճիկ զարմանքով կը տեսնեն այս երեք իշխանաց դիակները կ'ուրծքերնէն իրենց մատնութեան յանցանքը եւ օրինաւորապէս դատաւորաց տուեալ դատակնիքով որուն հնազանդելով Յովնան խութեցուոց զօրավարը կը գործադրէ նոյն վճիռը: Կրնաս երեւակայել հայ ժողովրդեան լռիկ եւ անձայն ուրախութիւնը, բայց նոյնպէս երեւակայէ այդ անիծեալ Բուղայի կատաղութիւնը եւ միանգամայն սարսափը, որուն առջի հրամանը եղեր է երեք-չորս մեծամեծ զօրաց գունդեր դրկել այս սասնցուոց վրայ, ուր որ հանդիպին ողջ կամ մեռած իրեն բերել: Այս առաւօտ մասնաւոր սուրհանդակ մը այս լուրը ինձի կը բերէ, քիչ մը վերջը բռնաւորին սուրհանդակը ինձ հրաման կը բերէ, որ զհայրս սպարապետը կուգէ այս անօրէնը: Ահա բոլոր վիճակը, ուր հիմա կը գտնուինք: Աստուած ինք հասնի, այս գարնան դուռները տեսնենք մեզ ի՞նչ դառնութեան աղբիւր պիտի բանան:

Աշոտ Սիւնի, կաթողիկոսին մահը լսելով յարկ համարեցաւ երթալ Սիւնիք, ուստի իր հրաժարական ողջոյնը տալով Բագրատունուոյն, ելաւ ճամփայ եւ սառած Ախուրեանին վրայէն անցաւ դիմացի